

**ՀՀ Ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/9**

**2 դեկտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Հայկազ Հայկազյանի 07.11.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ ՕՀՎ 14.10.2014 թ-ի թիվ 5100401 ստուգման ակտի դեմ:

**Ա/Ձ Հայկազ Հայկազյանի գանգատում բերված փաստարկները.**

16.09.2014 թ-ին ժամը 16:00-ի սահմաններում միաժամանակ ստուգում է անցկացվել Երևան քաղաքի Գ.Նժդեհի 4/42 և Ազատության 11 հասցեներում գտնվող միրգ բանջարեղենի խանութներում օրենքի կոպիտ խախտմամբ, հետևյալ հիմնավորմամբ.

Գ.Նժդեհի 4/42 հասցեում գտնվող խանութի դռան վրա նշված ժամանակահատվածում փակցված է եղել հայտարարություն այն մասին, որ անհրաժեշտ է վաճառողուհի: Այդ իսկ նպատակով 16.09.2014 թ-ին խանութ է եկել էղիտա Բորիսի Անտոնյանը և գանձապահ՝ Գեղեցիկ Գրիգորյանին հայտնել, որ աշխատանք է փնտրում: Գանձապահը վերջինիս ասել է, որ տնօրենը տեղում չէ, լինելու է մի քանի օրից: էղիտա Անտոնյանը պատասխանել է, որ ուզում է ծանոթանալ աշխատանքի բնույթին, որպեսզի որոշի կարող է աշխատել, թե ոչ և ինքնակամ մնացել է խանութում: Նշված ժամանակահատվածում խանութ են եկել օպերիվազորները, որոնք հնարավորինս կոպիտ են վարվել խանութում գտնվող աշխատակիցների և քաղաքացիների հետ, արհեստականորեն խառնաշփոթ են ստեղծել, ինչի արդյունքում 14.10.2014 թ-ն Աևան քաղաքում կազմված ակտում միտումնավոր էղիտա Անտոնյանին նշել են, որպես չձևակերպված աշխատակից, որն ընդամենը աշխատանք էր փնտրում:

Օպերիվազորների կողմից անհասկանալի ձևով նույն ժամանակ ստուգումներ են անցկացվել Ազատության 11 հասցեում գտնվող խանութում, որն իրականությանը չի համապատասխանում: Իրականում խանութ է մտել ինչ որ տղամարդ, որը չի ներկայացել ով է, որտեղ է աշխատում, վկայական ցույց չի տվել, ծմերուկ է գնել, վճարել, ստացել ՀԴՄ կտրոնը, որից հետո աշխատակիցներին հարցրել է նրանց անունը, ազգանունը, որտեղ են բնակվում: Աշխատակիցները փորձել են պարզել նրա ով լինելը և ինչու է նման հարցեր տալիս: Հնչել է պատասխան, որ հարկայինի աշխատակից է՝ գրանցված և չգրանցված աշխատակիցների վերաբերյալ ստուգումներ է անցկացնում: Արդյունքում պարզել է, որ Թեհմինե Աղոյանը գրանցված աշխատակից չէ: Աշխատակիցները առաջարկել են, որ նման հարցերի վերաբերյալ դիմի Ա/Ձ Հայկազ Հայկազյանին (այսուհետ նաև գանգատաբեր): Այդ ընթացքում խանութից դուրս է եկել անչափահաս մի տղա և այդ տղամարդը որոշել է, որ այդ տղան խանութի աշխատակից է: Ստուգողի պահանջով խանութի աշխատակիցները կանգառում երթուղայինի սպասող այդ տղային ներս են կանչել, չմտածելով անգամ, որ այդ երեխան կարող դիտվել որպես չգրանցված աշխատող:

Այդ տղայի և աշխատանք փնտրող աղջկա վերաբերյալ տվյալները Ա/Ձ Հայկազ Հայկազյանն իմացել է իրեն ուղարկված և սխալներով կազմված ակտերից: Մասնավորապես, ակտում նշված է, որ Կարեն Թադևոսի Թադևոսյանը ծնված է 25.11.1971 թ-ին և փաստացի բնակվում է Նորագավիթ 8-րդ փողոցի թիվ 1-ին տանը: Ճշմարտությունը պարզելու նպատակով գանգատաբերն այցելել է էղիտա Անտոնյանի և Կարեն Թադևոսյանի բնակության հասցեներ:

Ակտում նշված Կարեն Թադևոսյանի բնակության հասցեով նման մարդ չէր բնակվում, հարևաններին հարցուփորձ անելով պարզվել է, որ Նորագավիթում առկա է նաև Նորագավիթ 8 կմ թիվ 1 հասցե, որտեղ և բնակվում է Կարեն Թադևոսյանը: Ընդ որում հարկ է նշել, որ Կարեն Թադևոսյանը ծնվել է ոչ թե 25.11.1971 թ-ին, այլ՝ 05.01.1998 թ-ին:

Ըստ գանգատի, Ակտերում սխալ են նշված նաև մյուս աշխատակիցների վերաբերյալ տվյալները (հայրանունները, բնակության հասցեները):

Ըստ էդիտա Անտոնյանի հայտարարության, նա 2014 թ-ի սեպտեմբերի կեսերին աշխատանք փնտրելու նպատակով դիմել է տարբեր խանութների, այդ թվում նաև գանգատաբերին պատկանող Գ.Նժդեհի 4/42 հասցեում գտնվող խանութ: Խանութի գանձապահը նրան հայտնել է, որ ղեկավարը մի քանի օր չի լինելու և չի կարող ասել իրեն աշխատանքի կընդունեն թե ոչ: Սակայն էդիտա Անտոնյանը որոշ ժամանակ մնացել է խանութում, որպեսզի ինքն իր համար պարզի կարող էր աշխատել խանութում, թե ոչ: Այդ ընթացքում գանձապահը վատառողջ լինելու պատճառով իր բարեկամին կանչել է խանութ, որ իր փոխարեն աշխատի: Գանձապահի դուրս գալուց հետո խանութ են եկել երկու տղամարդ, որոնցից մեկը կանգնել է կասայի կողքին, իսկ մյուսն ինչ-որ մի բան է գնել: Գանձապահի բարեկամուհին ՀԴՄ կտրոն չի կարողացել տպել, ինչ-որ խոսակցություն է եղել, որից հետո մի քանի րոպե տղամարդը մոտեցել և պահանջել է հայտնել անուն ազգանունը, բնակության հասցեն: Էդիտա Անտոնյանը պատասխանել է, որ խանութում չի աշխատում, այլ ընդամենը աշխատանք է փնտրում:

Հայտարարություն է տրվել նաև Կարեն Թադեոսյանի կողմից, և քանի որ նա անչափահաս է հայտարարությունը ստորագրել են նաև նրա ծնողները: Մասնավորապես, Կարեն Թադեոսյանը հայտնել է, որ 2014 թ-ի սեպտեմբերի 16-ին գտնվել է Մանուկենտում, մտել է խանութ կարտոֆիլ գնելու, որը, սակայն, չի գնել, քանի որ չի հավանել: Դրանից հետո խանութից դուրս է եկել և գնացել է կանգառ: Քիչ հետո խանութի աշխատողն իրեն հետ է կանչել: Խանութում ինչ-որ տղամարդ հարցրել է իր անունը, ազգանունը, բնակության հասցեն, նա խանութի բանվորն է, թե՛ ոչ: Կարենը պատասխանել է, որ տվյալ խանութում չի աշխատում, ինչպես նաև հայտնել է, որ գանգատաբերին չի ճանաչում:

Հայտարարություն է տրվել նաև Կարեն Թադեոսյանի ծնողների կողմից, որոնք հայտնել են, որ իրենց որդին անչափահաս է, ոչ մի տեղ չի աշխատել և չի աշխատում:

Հայտարարություն է տվել նաև Մարիամ Արթինյանը, որն աշխատում է Գ.Նժդեհի 4/42 հասցեում գտնվող խանութում: Վերջինս հաստատել է, որ էդիտա Անտոնյանը այդ խանութի աշխատակից չէ և, որ ստուգման ժամանակ նա ընդամենը աշխատանք է փնտրում:

Հայտարարություն է տրվել նաև Աննա Հարությունյանը, որն աշխատում է Ազատության 11 հասցեում գտնվող խանութում: Վերջինս հաստատել է, որ Կարեն Թադեոսյանը նձված խանութում երբևէ չի աշխատել:

Այն հանգամանքը, որ ստուգման ժամանակ Երևան քաղաքի Գ.Նժդեհի 4/42 հասցեի խանութի գանձապահը տեղում չի եղել և իրեն փոխարինել է իր բարեկամը, ինչի հետևանքով ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, և որ այդ անձը դիտարկվել է որպես չձևակերպված աշխատող, գանգատաբերն ընդունում: Ընդունվում է նաև Լուսինե Պարսամյանին և Թեմինե Աղոյանին որպես չձևակերպված աշխատակիցներ դիտարկելու փաստը: Ինչ վերաբերվում է էդիտա Անտոնյանին և Կարեն Թադեոսյանին, ապա գանգատաբերը հայտնում է, որ նման աշխատողներ չի ունեցել և չունի ու չի պատրաստվում անօրինական կերպով կազմված ակտի պահանջներն այդ երկուսի մասով կատարել:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում և պահանջում է վերանայել ՕՀՎ 14.10.2014 թ-ի թիվ 5100401 ստուգման ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 08.09.2014 թ-ի թիվ 5100401 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Հազկազ Հայկազյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և

հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 14.10.2014 թ-ի թիվ 5100401 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.050.000 դրամ:

Ա/Ձ Հազկազ Հայկազյանի գանգատը վերաբերվում է ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտումների համար առաջադրված պարտավորությանը: Մասնավորապես, ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ ստուգման պահին՝ 16.09.2014 թ-ին, Ա/Ձ Հազկազ Հայկազյանի ք.Երևան, Գ.Նժդեհի 4/42 հասցեում գտնվող միրգ-բանջարեղենի խանութում աշխատում էին վաճառողուհիներ էդիտա Բորիսի Անտոնյանը (ծնվ. 07.12.1986 թ., գրանցման հասցեն ք.Նոյեմբերյան, Կամոյի փող. 4/5, փաստացի բնակության հասցեն ք.Երևան, Շենգավիթ 1-ին փող. 20 տուն), Լուսինե Ո-աֆիկի Պարսամյանը (ք.Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց 1-ին նրբ., 11 շենք, բն. 28), գանձապահ Քրիստինե Սամվելի Վարդանյանը (ք.Երևան, Ն.Շենգավիթ 9 փող., շենք 2):

Ա/Ձ Հազկազ Հայկազյանի Ազատության 11-ի բացվածքում գտնվող միրգ-բանջարեղենի խանութում աշխատում էին վաճառողուհի Թեհմինե Յուրիկի Աղոյանը (ծնվ. 13.07.1991թ., գրանցման հասցեն Կոտայքի մարզ գ. Ալափարս, Վ.Մամիկոնյան փող., տան 38, փաստացի բնակության հասցեն ք.Երևան, 2-րդ հանրակացարան 419 բն), բանվոր Կարեն Թադևոսի Թադևոսյանը (ծնվ. 25.11.1971թ., գրանցման հասցեն ք.Երևան, Արարատյան 1 գնգ. 17/18, փաստացի բնակության հասցեն Նորագավիթ 8-րդ փող., տուն 1), որոնք ձևակերպված չէին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված չէին գրավոր աշխատանքային պայմանագրեր: Խախտվել է «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները, որի հետևանքով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետի համաձայն յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկվել է եկամտային հարկ 150.000 դրամի չափով, ընդամենը՝ 750.000 դրամ (5x150.000 դրամ):

Քննարկվող դեպքում Ա/Ձ Հազկազ Հայկազյանի գանգատը վերաբերվում է Կարեն Թադևոսի Թադևոսյանին և էդիտա Բորիսի Անտոնյանին որպես չձևակերպված վարձու աշատողներ դիտարկելու արդյունքում ստուգման ակտով լրացուցիչ առաջադրված պարտավորություններին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարի 08.09.2014 թ-ի թիվ 5100401 հանձնարարագրով վերապահված իրավասության շրջանակներում ստուգումն իրականացնող անձինք այցելել են ք.Երևան, Գ.Նժդեհի 4/42 և Ազատության 11-ի բացվածք հասցեներում գտնվող միրգ-բանջարեղենի խանութներ:

Ստուգումն իրականացնող անձանց կողմից նախ արձանագրվել են այդ խանութներում փաստացի աշխատող անձանց տվյալները: Նշված տվյալների և փաստացի գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ ստուգող անձանց ներկայացված գրավոր պայմանագրերի (հրամանների) համադրման արդյունքում պարզվել է, որ ք.Երևան, Գ.Նժդեհի 4/42 հասցեում գտնվող միրգ-բանջարեղենի խանութում փաստացի աշխատող վաճառողուհիներ էդիտա Բորիսի Անտոնյանի, Լուսինե Ո-աֆիկի Պարսամյանի և գանձապահ Քրիստինե Սամվելի Վարդանյանի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ: Նման խախտման փաստ է արձանագրվել նաև Ազատության 11-ի բացվածք հասցեում գտնվող միրգ-բանջարեղենի խանութում աշխատող վաճառողուհի Թեհմինե Յուրիկի Աղոյանի և բանվոր Կարեն Թադևոսի Թադևոսյանի վերաբերյալ: Նշված խախտումների վերաբերյալ 16.09.2014 թ-ին սահմանված կարգով կազմել են համապատասխանաբար թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին նաև, որ նախապես՝ մինչև ստուգումը սկսելը, իրենց կողմից կատարված այցելությունների և դիտարկումների ընթացքում ֆիքսվել են նշված խանութներում փաստացի աշխատող անձանց քանակը:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց և գանգատաբերի կողմից բերված փաստարկների, ինչպես նաև սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ստուգման ակտի 1-ին կետից

